# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 11-Լ

«24» 01 2025թ.

ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ Սիրո Հրաչի Ամիրխանյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և նույն վարչության պետի պարտականությունների կատարումը վարչության պետի տեղակալ Տիգրան Աղվանի Ենոքյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2025 թվականի հունվարի 15-ի համապատասխանաբար՝ 45-Ա և 46-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Կատարել Ս. Ամիրխանյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Տ. Ենոքյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Արամյան Արամ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Գրիգորյան Սեդա - | ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ |

| | |
|---|---|
| Առաքելյան Ռուբեն - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Կիրակոսյան Արևիկ - | ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի փետրվարի 24-ը:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**